

մեն տեսակ կը մշակէ: Տեղական ժողովրդեան պիտոյքներ հոգալէ վերջ, ուրիշ երկրներ ալ կը փոխադրէ իր բերքերէն:

Ա. Շ.

*
* *

Ու հողիկս մէջ՝ անսահման, անժայր,
Որպէս մի վառ աստղ՝ մութ հորիզոնում,
Աղբում է, շնչում մի սուրբ գաղափար,
Որին ես առաջ եմ գնում...

Ո՛վ դու Գողգոթան արեան ու փառքի,
Ուր խաչուեց մարմինն, այլ ոչ գաղափար,
Աշխարհը թող ինձ թքէ, անարգի,
Ես կըգամ դէպ քեզ յոյսերով միշտ վառ...

Յոյսերով... այո. այժմ օր է ձմրան,
Երկրին տիրել է խաւարն ահարկու...
— Միթէ՞ վառ օրը ապագայ գարնան
Յնորք է, միթէ՞ նա էլ չի գալու...

Հր. Փալևան